

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19-րդ հունվարի 2017թ.

**ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

**N 1 - Ն ՈՐՈՇՈՒՄ**

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2017թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18/5 և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 32/5 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասին՝ համաձայն հատված 1-ի:

2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:

3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:

4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:

5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:

6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:

7. <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

	Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե	հազ. դրամ Ընդամենը
Եկամտային մաս	482820.6	0	482820.6
Ծախսային մաս	483564.8	32944.3	491509.1
Ղեֆիցիտ	-744.2	-32944.3	-33688.5
Պահուստային ֆոնդ	25000.0	0	25000.0

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10

ԴԵՄ - 0

ՁԵՌՆՊԱՆՆԵՐ - 1

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՄԱՍՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՄԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Քվեարկությանը չի մասնակցել Կ. Շահազիզյանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

19-ր հունվարի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2016թ.-ի ՀՄ. 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

***N 2 - Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18/18, <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքի 12-րդ, 14-րդ, 25-րդ և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ. հմ. 1-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ հաստատել նոր դրույքաչափերով /կցվում է Հավելված 1, 1/2 , 1/3/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

**ԿՈՂՄ - 10**

**ԴԵՄ - 1**

**ՁԵՌՆՊԱՀ - 0**

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Քվեարկությանը չի մասնակցել Կ. Շահազիզյանը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Թ. Շ Ա Հ Վ Ե Բ Դ Յ Ա Ն**

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ.ՄԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐՈ**

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	ԴՐՈՒՅՔԱԶԱՓ /դրամ/
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.	
<i>ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝</i>	
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ	15000
<i>բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝</i>	
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ	30000
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ	50000
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,	50000
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.	50000
<i>գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝</i>	
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,	3000
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.	5000
2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
<i>ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,</i>	3000
<i>բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,</i>	
<i>գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.</i>	
3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.	5000
4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային	300000

տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.	
5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսու հազար դրամ.	60000
6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.	50000
7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ավկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝	
<i>ա. ոգելից և ավկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝</i>	
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,	5000
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,	11000
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,	14000
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,	21000
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ,	26000
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.	46000
<i>բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝</i>	
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,	5000
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,	11000
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,	14000
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,	21000
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ.	26000
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ.	46000
8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.	350
9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահուճով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	
ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ,	50000
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ,	50000
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ,	200000

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ,	1000000
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ,	250000
զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ.	150000
10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝	
<i>ա. հիմնական շինությունների ներսում՝</i>	
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հինգ հազար մեկ դրամ,	2500
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տասը հազար մեկ դրամ,	10000
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ,	15000
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,	20000
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ,	30000
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամից մինչև հիսուն հազար մեկ դրամ.	50000
<i>բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝</i>	
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ,	1000
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ,	2000
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ,	4000
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ,	8000
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ,	15000
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.	25000
11) քաղաքային բնակավայրերում ավազանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.	5000
12) ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ձանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,	2000
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,	3500
գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,	0
դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,	1500
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,	375
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.	150
13) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.	100000
14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու	10000

թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.	
15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.	500000

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ	ԴՐԱՄ
1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ նշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	25000
2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	25000
3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	5000
4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	5000
5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	10000
6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.	Հավելված1/1
7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.	
Ա.Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի 1 խմ աղբի համար	2500
Բ. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի 1 տոննա աղբի համար	8000
8) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով. 1քմ.-ի համար	20
9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.	Հավելված1/2
10) համայնքային ենթակայության արտադարոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.	Հավելված1/3
11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար:	1000

**Աշտարակ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում  
ծառայությունների դիմաց սահմանված փոխհատուցման վճարներ**

- Աշտարակ համայնքի բնակիչների համար՝ ամսական 5000 դրամ
- Այլ համայնքի բնակիչների համար՝ ամսական 8000 դրամ:

Աշտարակ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողների կամ նրանց ներկայացուցիչների վճարումները կատարել ամսական կտրվածքով՝ անկախ երեխայի հաճախած օրերի քանակի, բացառությամբ համաճարակների և նմանատիպ այլ դեպքերի:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն**

1. <Աշտարակի Արտեմի Այվազյանի անվան երաժշտական դպրոց> ՀՈԱԿ-ում ծառայությունների դիմաց սահմանված փոխհատուցման վճարներ

Բաժիններ	Դրամ
Դաշնամուր	5000
Լարային գործիքներ, բացառությամբ կիթառի	4000
Կիթառ	5000
Ազգային նվագարաններ (ժող.գործիքներ), բացառությամբ ուղ, քամանչա	4000
Ուղ	3000
Քամանչա	3000
Վոկալ	5000
Փողային գործիքներ	4000

2. <Աշտարակի պարարվեստի դպրոց-ստուդիա> ՀՈԱԿ-ում ծառայությունների դիմաց սահմանված փոխհատուցման վճարներ
- բոլոր բաժինների համար - 3000 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն



# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19-ր հունվարի 2017թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

---

*/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

**N 3 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

Հիմք ընդունելով որոշ ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները, ղեկավարվելով <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի մասով տրամադրել հարկային արտոնություն /Հավելված 1/:

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 11

ԴԵՄ - 0

ՁԵՈՆՊԱՀ - 1

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու  
19.01.2017թ. N3-Ա որոշմամբ

	<b>ԳՈՒՑՔԱՀԱՐԿ</b>	
1	52000	Լիլիթ Թումանյան
2	41100	Սամվել Գրիգորյան /Սուրեն Գրիգորյան/
3	37500	Սամվել Գրիգորյան
4	171537	ՀԿՄ Աշտարակի ՈՒԱԶ ՄՊԸ
	302137	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19-րդ հունվարի 2017թ.

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016թ. ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Ձեկուցող՝ Ջ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

*N 4 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Աշխատանքի ծավալների մեծացման հետ կապված, ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին>  
ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջերով, համայնքի ավագանին՝*

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 14.11.2016թ. թիվ 6-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և հավելված 13-ը հաստատել նոր դրույքաչափերով /կցվում է/:

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 12*

*ԴԵՄ - 0*

*ՋԵՈՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

**Նախկին /Զի գործում/**

**"Կոմունալ" ՀՈԱԿ**

Աշխատակիցների թվաքանակը՝

37

N	Հաստիքացուցակ	Հաստիքային միավորը	1 միավորի դրույքաչափը /դրամ/	Ընդամենը	Աշխատակիցների թվաքանակը
1	Տնօրեն	1	150000	150000	1
2	Փոխտնօրեն	1	130000	130000	1
3	Գերեզմանատան պատասխանատու	1	120000	120000	1
4	Գերեզմանատան "Ձախ ափ" տեղամասի պատասխանատու	1	90000	90000	1
5	Հաշվապահ	1	135000	135000	1
6	Հաշվետար	1	90000	90000	1
7	Վարորդ	6	120000	720000	6
8	Մեխանիկատոր	1	135000	135000	1
9	Բանվոր	7	106000	742000	7
10	Հավաքարար	12	95000	1140000	12
11	Հաշվառիչ	5	Պայմ.	0	5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>37</b>		<b>3452000</b>	<b>37</b>

**Հավելված 13**

Հաստատված է համայնքի ավագանու  
19.01.2017թ. N 4-Ա որոշմամբ

**Նոր /Գործող դրույքաչափեր/**

**"Կոմունալ" ՀՈԱԿ**

Աշխատակիցների թվաքանակը՝

37

N	Հաստիքացուցակ	Հաստիքային միավորը	1 միավորի դրույքաչափը /դրամ/	Ընդամենը	Աշխատակիցների թվաքանակը
1	Տնօրեն	1	230000	230000	1
2	Փոխտնօրեն	1	170000	170000	1
3	Գերեզմանատան պատասխանատու	1	150000	150000	1
4	Գերեզմանատան "Ձախ ափ" տեղամասի պատասխանատու	1	90000	90000	1
5	Հաշվապահ	1	135000	135000	1
6	Հաշվետար	1	110000	110000	1
7	Վարորդ	6	150000	900000	6
8	Մեխանիկատոր	1	170000	170000	1
9	Բանվոր	7	130000	910 000	7
10	Հավաքարար	12	120000	1440000	12
11	Հաշվառիչ	5	Պայմ.	0	5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>37</b>		<b>4305000</b>	<b>37</b>

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19-րդ հունվարի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂՂԱՄԱՐՅԱՆ/*

*N 5-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասն աճուրդ-վաճառքով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 12*

*ԴԵՄ - 0*

*ՁԵՆՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու  
19.01.2017թ. N 5-Ն որոշմամբ

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործարանական նշանակությունը	Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/	Սահմանափակումներ
1	հողատարածք	Աշտարակ տեղամաս	531-005-ից	0,335հա	գյուղ.	ալլ	-----	100	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն